

ԻԲ

Հայոց քաղաքների գերեզմանք



անօթ է մեզ թէ Լեւոն Կահիրէի մէջ մինակ շանցուց իր գերու-
թիւնը, այլ իրեն կընկերանային կինը՝ Մարգարիտ թագուհին
ու երկու աղջիկները: Արդ՝ ի՞նչ եղան անոնք երբ Լեւոն Եւրոպա անցու-
Եւրոպացի ու հայ պատմիչներէ շտաեր կըսեն, թէ Լեւոնի կինն ու
աղջիկը (1) կը գանուէին Երուսաղէմ երբ Հայոց թագաւորն ազատ ար-
ձակուեցաւ:

Ինչպէս շատ անգամներ յիշած եմ, այս չփոթութիւնն յառաջ եկած
է զանոնք Մարիամի ու Յիսիբի (= Փիննա) հետ չփոթելէն (2):

Ուրիշ ժամանակակից մարդիկ եւ արժանահաւատ շուերագրեր կը
վկայեն, որ Լեւոնի « կինն ու զուակները մեռան բանտի մէջ (3): »

Իսկ երկու իսալացի ճամբորդներ՝ Յրէսկոբալդի եւ Գուչչի՝ աւելի
մանրամասնութիւններ տալով կըսեն, թէ « Կահիրէի եւ Բաբելոնի միջեւ՝
իբր մէկ նետածիգ հեռաւորութեան վրայ կը գտնուի Աղեքսանդրիայի
եպիսկոպոս Ս. Մարտինոսի եկեղեցին (la chiesa di S. Martino), ուր
թագուած է իր մարմինը, այսինքն՝ նշխարները, մետաքսէ կերպասի մը
մէջ փաթթուած . . . : Մի եւ նոյն եկեղեցին մէջ թաղուած է Հայոց
թագուհին, որուն ամուսինը սուլտանին բանտարկեալն էր: Այս եկեղեցին
մէջ հայ քրիստոնեաներու համար պաշտօն կը կատարուի (4): »

Խնդիր է գիտնալ, թէ ո՞ւր կը գտնուէր Ս. Մարտինոսի եկեղեցին:

Ձեռքիս տակ գտնուած երկու հին հեղինակութիւններ — Արուսաղ
ու Մակրիդի — որոնք Եգիպտոսի վանքերուն ու եկեղեցիներուն նկարա-

(1) Ռովնեսեւ բոլորն ալ մեկ աղջիկ միայն կընկուցին:

(2) Տե՛ս գրքիս մեջ եր. 40—41, եր. 53 ծանօթ. 2, մանաւանդ եր.
57—58 եւ եր. 75 ծանօթ. 1:

(3) *Petit Thalamus*, եր. 406:

(4) L. Frescobaldi, *Viaggio*, եր. 103: Այս համբողջ Լեւոնի մեռ-
նելէն երկու տարի վերջը միայն, 1384-ին, այցելած է Կահիրէ եւ աչքովը
սեսած Մարգարիտի գերեզմանը: Իսկ միւս համբողջը՝ Գ. Գուչչի՝ Յրէսկոբալդիէ
մեկ երկու տարի յետոյ այցելելով Կահիրէ, մի եւ նոյն նկարագրութիւնը կընէ: